ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/41

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.04.2018թ. թիվ 03/26-3/7133-18 գրությամբ «Ռազշին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 08420204) (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի 13.04.2018թ. թիվ 18/231-18 գրության հիման վրա, 16.04.2018թ. «Ռազշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>«Հայաստանի փոքր եվ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը 13.04.2018թ. թիվ 18/231-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից մետաղական աղբարկղների պատրաստման և դրանց ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքային, Հաղպատ ու Աքորի գյուղական համայնքներում տեղադրման աշխատանքների գնման նպատակով 27.02.2018թ. հայտարարվել է ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/8 ծածկագրով գնման ընթացակարգ: Գնման ընթացակարգի արդյունքում հաղթող է ճանաչվել հրավերի պահանջներին բավարարող նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Ռազշին» ՍՊԸ-ն: Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Ռազշին» ՍՊԸ-ն 27.03.2018թ. սահմանված կարգով ծանուցվել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում, սակայն մասնակցի կողմից սահմանված ժամկետում պայմանագրի ապահովումը չի ներկայացվել և armeps համակարգում պայմանագրի շնորհումը չի ընդունվել:»:

«Հայաստանի փոքր եվ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. **<u>«Ռազշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը դիմել է «Ռազշին» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.04.2018թ. թիվ 03/26-3/7133-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր«Ռազշին» ՍՊԸ-ի տնօրեն Ավագյան Իշխանը:

4. ՍՑ-ԷՍ-2018/41 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 16.04.2018թ. թիվ 03/26-3/7133-18 գրությունը, «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի 13.04.2018թ. թիվ 18/231-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 12.03.2018թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 2, 16.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 և 12.04.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները.

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կարիքների համար՝ մետաղական աղբարկղների պատրաստման և դրանց ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքային, Հաղպատ ու Աքորի գյուղական համայնքներում տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/8 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Ռազշին» ՍՊԸ:

Հանձնաժողովը 12.03.2018թ. ժամը 10:30-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 8.1 կետով որոշել է՝ ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/8 ծածկագրով մրցույթի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել հրավերի պահանջներին համապատասխան հայտ ներկայացրած նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «Ռազշին» ՍՊԸ-ին:

Հանձնաժողովը 16.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով որոշել է՝ ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/8 ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչել «Ռազշին» ՍՊԸ-ին:

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը 27.03.2018թ. պայմանագիր կնքելու մասին ծանուցմամբ «Ռազշին» ՍՊԸ-ին հայտնել է հետևյալը.

««Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կարիքների համար՝ մետաղական աղբարկղների պատրաստման և դրանց ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքային, Հաղպատ ու Աքորի գյուղական համայնքներում տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/8 ծածկագրով ընթացակարգի հաղթող մասնակից է ճանաչվել Ձեր կազմակերպությունը: Խնդրում եմ հրավերով սահմանված կարգով և ժամկետնորում ներկայացնել պայմանագրի ապահովում՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով: Կից ներկայացվում է կնքվելիք պայմանագրի նախագիծը: Պայմանագիրը կնքված և ստորագրված 3 օրինակից անհրաժեշտ է ներկայացնել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի գրասենյակ:»:

Հանձնաժողովը 12.04.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի «Ռազշին» ՍՊԸ-ն ծանուցվել էր, տաս աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում, սակայն մասնակցի կողմից սահմանված ժամկետում պայմանագրի ապահովումը չի ներկայացվել և armeps համակարգում պայմանագրի շնորհումը չի ընդունվել:

Նույն արձանագրության.

- 2.1 կետով Հանձնաժողովը արձանագրել է, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Ռազշին» ՍՊԸ-ն զրկվել է ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/8 ծածկագրով մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու իրավունքից:
- 3.1 կետով Հանձնաժողովը որոշել է «Ռազշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/8 ծածկագրով գնանշման ընթացակարգի հրավերի N 1.1 հավելվածով սահմանվել է գնման ենթակա ապրանքի նախահաշիվը հետևյալ բովանդակությամբ.

«Կենցաղական աղբի մետաղական արկղ կափարիչով (40հատ)՝

1. անվանումը՝ արկղի հատակի և պատերի թիթեղներին կապող շրջանակի (կմախքի) կառուցում 50x50x5մմ չափերի պողպատե անկյունակից (264.32մ), չափի միավորը՝ տն, քանակը՝ 1.161,

2. անվանումը՝ 2.0 մմ հաստությամբ պողպատե թիթեղից արկղի կողքերի իրականացում (67.2մ2), չափի միավորը՝ տն, քանակը՝ 1.51,

3. անվանումը՝ պողպատե ձող Ø8մմ կողքերի անկյուններում, չափի միավորը՝ տն, քանակը՝ 0.05,

4. անվանումը՝ հենարաններ պողպատե քառակուսի 25x25x2x80մմ խողովակից, չափի միավորը՝ տն, քանակը՝ 0.03,

5. անվանումը՝ 2.5 մմ հաստությամբ պողպատե թիթեղից արկղի հատակի իրականացում (13.72մ2), չափի միավորը՝ տն, քանակը՝ 0.384,

6. անվանումը՝ արկղի հատակի գայլիկոնում 15մմ տրամագծի գայլիկոնով (28*5հատ) չափի միավորը՝ հատ, քանակը՝ 200,

7. անվանումը՝ արկղների բարձրորակ յուղաներկում 2 անգամ՝ մետաղի ներկով, չափի միավորը՝ մ^2, քանակը՝ 231.2:

Արկղի կափարիչ (40 հատ)՝

1. անվանումը՝ արկղի կափարիչի շրջանակի պատրաստում 32x32x4մմ չափերի պողպատե անկյունակից, չափի միավորը՝ տն, քանակը՝ 0.488,

2. անվանումը՝ կափարիչի ամրանային ցանցի պատրաստում Ø8մմ համասեր ամրանից, չափի միավորը՝ տն, քանակը՝ 0.131,

3. անվանումը՝ արկղների կափարիչների բարձրորակ յուղաներկում 2 անգամ՝ մետաղի ներկով, չափի միավորը՝ մ^2, քանակը՝ 16.2:

ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/8 ծածկագրով գնանշման ընթացակարգի հրավերի N 1.2 հավելվածով սահմանվել է գնման ենթակա ապրանքի գծապատկերը՝ համապատասխան չափման միավորներով:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/8 հրավերով սահմանված N 1.1 և N 1.2 հավելվածներում առկա են անհամապատասխանություններ՝ մասնավորապես նախատեսված 264.32գմ 50*50*5մմ

պողպատե անկյունակի փոխարեն անհրաժեշտ էր նախատեսել 376.32գմ 50*50*5մմ պողպատե անկյունակ, 67.2մ^2 2մմ հաստությամբ պողպատե թիթեղի փոխարեն անհրաժեշտ էր նախատեսել 90.0մ^2 պողպատե թիթեղ և 13.72մ^2 2.5մմ հաստությամբ պողպատե թիթեղի փոխարեն անհրաժեշտ էր նախատեսել 19.6մ^2 պողպատե թիթեղ, հետևաբար նախատեսված նյութերի ծավալները չեն համապատասխանում տվյալ աշխատանքները կատարելու համար իրականում պահանջվող նյութերի ծավալներին:

Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ նշված անհամապատասխանությունների վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով գրությամբ դիմել է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամին, սակայն մինչ օրս որևէ պատասխան պատվիրատուի կողմից չի ստացվել:

Բողոքներ քննող անձը 05.05.2018թ. գրությամբ դիմել է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամին՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարությունը 16.04.2018թ. թիվ 03/26-3/7133-18 գրությամբ «Ռազշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից 05.05.2018թ. ժամը 16:00-ին հրավիրված նիստի ժամանակ «Ռազշին» ՍՊԸ-ի տնօրենը հայտնել է, որ գրությամբ դիմել է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրենին՝ տեղեկացնելով, որ «ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/8» հրավերով սահմանված N 1.1 և N 1.2 հավելվածներում առկա են անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ նշված հրավերի N 1.1 հավելվածը հանդիսանում է գնման ենթակա ապրանքի նախահաշիվը, իսկ N 1.2 հավելվածը՝ նույն ապրանքի գծապատկերը, և եթե գնման ենթակա ապրանքը պատրաստվի ըստ N 1.2 հավելվածով նախատեսված գծապատկերին համապատասխան, ապա 40 հատ կենցաղային աղբի մետաղական արկղի պատրաստման համար N 1.1 հավելվածում նախատեսված 264.32գմ 50*50*5մմ պողպատե անկյունակի փոխարեն անհրաժեշտ էր նախատեսել

376.32գմ 50*50*5մմ պողպատե անկյունակ, 67.2մ^2 2մմ հաստությամբ պողպատե թիթեղի փոխարեն անհրաժեշտ էր նախատեսել 90.0մ^2 պողպատե թիթեղ և 13.72մ^2 2.5մմ հաստությամբ պողպատե թիթեղի փոխարեն անհրաժեշտ էր նախատեսել 19.6մ^2 պողպատե թիթեղ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ հնարավորինս սեղմ ժամկետում վերը նշված անհամապատասխանությունների վերաբերյալ Բողոքներ քննող անձին տրամադրել Ձեր գրավոր դիրքորոշումը:»

Սակայն, Բողոքներ քննող անձին «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից որևէ տեղեկավություն վերը նշվածի վերաբերյալ չի տրամադրվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:
- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:
- 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

• 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումն, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

• 50-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի պահանջներին համապատասխան՝ բողոք ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը դիմում է պատվիրատուին՝ տվյալ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը խորհուրդ ներկայացնելու պահանջով: Սույն կետում նշված փաստաթղթերը պատվիրատուն խորհուրդ ներկայացնում է նման պահանջ ստանալու օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում:

• 50-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա լինելու բողոքի քննության նպատակով հրավիրված նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/8 ծածկագրով հրավերի՝

• 9.2 կետի համաձայն՝ նույն հրավերի 1-ին մասի 8.26 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան նույն հրավերի 1-ին մասի 8.26 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

• 9.5 կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի

փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից Օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում, ինչպես նաև մինչև նույն ընթացակարգի վերաբերյալ որոշում կայացնելու ավարտը, Բողոքներ քննող անձին չի տրամադրել Ընկերության կողմից մատնանշած անհամապատասխանությունների վերաբերյալ որևէ տեղեկատվություն:
- «Ռազշին» ՍՊԸ-ն առկա անհամապատասխանությունները շտկելու և առաջարկվող պայմանագիրը ստորագրելու նպատակով դիմել է Պատվիրատուին, սակայն Պատվիրատուի կողմից որևէ գործողություն չի իրականացվել:

Բողոքներ քննող անձը հիմնավոր է համարում Ընկերության կողմից ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/8 հրավերով սահմանված N 1.1 (ապրանքի նախահաշիվ) և N 1.2 (ապրանքի գծապատկեր) հավելվածներում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ բերված ապացույցները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ռազշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ Բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.04.2018թ. թիվ 03/26-3/7133-18 գրությամբ «Ռազշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ